

ԲԱԶՄԱԲԱՌՈՒՅԹԱՑՈՒՄԸ ՈՐՊԵՏ
ՂԱՐԶԿԱԾԱԿԱԶՄՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՏՈՒՄ

Ղարձվածակագնությունը բարդ պրոցես է, որտեղ իրենց դրսևորում են գտնում տարբեր երևույթներ, որոնք տեղի չեն ունենում իրարից անկախ, քանի որ, ինչպես հայտնի է, լեզվի մեջ տեղաշարժերը տեղի են ունենում զուգահեռաբար՝ ներքին ներդաշնակության օրենքներով:

Շարլ Բալլին իր «Ընդհանուր լեզվաբանություն և ֆրանսերեն լեզվի հարցեր» աշխատության մեջ գրում է. «... այն, ինչը համադրական է լեզվի մի վիճակում, վերլուծական է եղել նրա մեկ այլ վիճակում և ընդհակառակը»¹: Լեզուն կայուն լինելով հանդերձ, գտնվում է մշտական շարժման մեջ: Լեզվական համակարգի այս առանձնահատկությունը, վերաբերում է նաև ֆրանսերենի ղարձվածակագնության միտումներին, որտեղ, ըստ էության, նկատվում է երեք հիմնական միտում.

1. *մենաբառությացում* (ղարձվածքի կամ ազատ կապակցության բաղադրիչները ծուլվում են միմյանց),

2. *բազմաբառությացում* (երկու կամ ավելի բառեր կազմում են մեկ ամբողջություն՝ ղարձվածք):

3. *դիպլոմատային փոխակերպումներ* (ղարձվածքը սերտաճում է նոր տարրերով՝ ընդարձակելով իր կառուցվածքը):

Այս հոդվածում կսահմանափակվենք միայն բազմաբառությացման որոշ առանձնահատկությունների քննությամբ:

Հետազոտությունները ցույց են տալիս, որ շատ հասկացություններ, որոնք ֆրանսերեն լեզվի զարգացման սկզբնական փուլում արտահայտվել են ամբողջական բառային միավորով (մենաբառությով), հետագայում արտահայտվել են բառակապակցություններով, որոնց հիման վրա շատ դեպքերում կազմվել են ղարձվածքներ:

Ժամանակակից ֆրանսերենում բառակապակցություններով արտահայտված հասկացությունների գործածությունը հին ֆրանսերենի համեմատ ճշտելու նպատակով կատարվել է հին ֆրանսերենով գրված վեպերից մեկի² քնագրի և Ժոզեֆ Բեդիեի կողմից տրված դրա թարգմանության զուգադրական

¹ Տե՛ս Բալլի Ս. *Общая лингвистика и вопросы французского языка*. М., 1955, էջ 160:

² *La châtelaine de Vergy*. Conte du XIII^e siècle publié et traduit par Joseph Bédier. L'édition d'Art, Paris, 1927, էջ 115.

վերլուծությունը, ինչը ցույց է տալիս, որ հին ֆրանսերենի ամբողջական բառերի բառակապակցություններով արտահայտված հոմանիշները զգալի թիվ են կազմում: Դա պարզորոշ երևում է հետևյալ օրինակներից՝

Հին ֆրանսերեն	Ժամանակակից ֆրանսերեն
1. por (p.34)	à cause de (p.35)
2. si (p.46)	à moins de (p.45)
3. par (p.54)	grâce à (p.55)
4. desfent (p.76)	...fait défense (p.77) և այլն :

Ժամանակակից ֆրանսերենում ավելացել է նման հասկացությունները վերլուծաբար արտահայտող բառակապակցությունների տեսակարար կշիռը, և հաճախակի է դարձել դրանց գործածությունը:

Ֆերդինանդ Բրյունոն իր «Ֆրանսերենի պատմության» առաջին հատորում, վկայում է, որ բազմաթիվ ամբողջական բառեր փոխարինվել են չղջասական դարձվածներով, ինչպես օրինակ՝

1. **avoier** — mettre sur la voie
2. **empiegier** — prendre au piège
3. **ennoitier** — commencer à faire nuit մթնել
4. **abelir** — sembler beau
5. **s'acorer** — être dans le chagrin
6. **adosser** — tourner le dos à
7. **aflouré** — brodé de fleurs ծաղկազարդ
8. **atrever** — faire cesser par une trêve
9. **avesprer** — venir sur le soir
10. **emparlé** — qui manie facilement la parole
11. **engeignier** — prendre par ruse
12. **enlatiner** — instruire en latin
13. **enlignagier** — prouver sa descendance
14. **enoiseler** — nourrir comme un oiseau և այլն :

Ֆերդինանդ Բրյունոյի բերած օրինակները հաստատում են ֆրանսերենում դարձվածակազմության միտումների շարունակականությունը, քանի որ նրա նշած ամբողջական բառերը, որոնք փոխարինվել են դարձվածքներով, նախկինում՝ *նախքան մեծաբառույթի վերածվելը*, նույնպես եղել են *դարձվածքներ* կամ *բազմաբառույթներ*: Գիշտ է, դրանք կազմված են տարբեր նախդիրներով, սակայն ընդհանուր միտումն ավելի քան ակնհայտ է:

Քննենք այդ օրինակներից մի քանիսը՝

1. **avoier** — «ուղու վրա դնել». ներկայացնում է *à + voier* բազմաբառույթի խտացված տարբերակը, ընդ որում *mettre sur la voie* դարձվածային տարբերակում *mettre sur* կապակցությունը փոխարինում է *à* նախդիրին:

2. **empiegier**—«թակարդով բռնել»։ Եկատելի է *en* նախդիրի առկայությամբ, որը հաջորդ *թ*-ի ազդեցությամբ վերածվել է *em* -ի, բուն նշանակում է «թակարդի մեջ առնել»։ *en* նախդիրին համապատասխանում է *prendre au* կապակցությունը։

3. **ennoitier**—«մթնել, մութն ընկնել»։ Կազմված է *en* նախդիրի հիմքի վրա և համապատասխանում է հայերեն «զիշերանալ, մթնել» ձևերին. *commencer à faire nuit* դարձվածը *en* նախդիրի փոխարեն ունի երեք տարր՝ *commencer à, faire, nuit*, որոնցից վերջինը փոխարինում է *ennoitier* բայի *ier* կազմիչին։

4. **abelir**—«լավ թվալ, լավ երևալ»։ Գալիս է *ā + belir* կառուցվածքից։ Գիշտ է, Բրյուսոն այս բայի դիմաց դրել է *sembler beau* կառուցվածքը, սակայն վերջինս չի կարելի համարել դարձվածք. քանի որ այն պարզապես ազատ կապակցություն է։ Ինչ խոսք, դա եական չէ, քանի որ ամեն դեպքում մենք գործ ունենք բազմաբառույթ-մենաբառույթ-բազմաբառույթ զարգացման հետ։

5. **s'acorer**—«վշտանալ»։ ակնհայտորեն ներկայացնում է *ā + corer* կառուցվածքը։

6. **adosser**—«մեկին թիկունք ցույց տալ, մեջքով կանգնել»։ բաղկացած է *ā* նախդիրից. *dos* «մեջք» բառից և *er* անորոշակերտ վերջածանցից։ Այս կազմության դիմաց ունենք *tourner le dos ā* դարձվածքը, որի վերջին առկա է նույն *ā* նախդիրը և որի հիմքի վրա կազմավորվել է *adosser* բայը։

7. **afLOURÉ**—արտահայտում է «ծաղիկներով զարդարված» իմաստը և համապատասխանում է «ծաղկազարդված» կառուցվածքին. ակնհայտ է *ā* նախդիրի առկայությունը (*ā + flouré*)։

8. **atrever**—«հաշտությամբ ավարտել»։ ներկայացնում է նույն կառուցվածքը՝ *ā + trever*. *faire cesser par une trêve* դարձվածքն ունի երեք տարր՝ *faire, cesser, par*։

9. **avesprer**—«երեկոյան կողմ գալ»։ կրկնում է նախորդ կառուցվածքները՝ ներկայացնելով՝ *ā + vespr + er* կազմությունը։

10. **emparlé**—կազմավորվել է *ā* նախդիրի հիմքի վրա, որը *թ* պայթակաճի ազդեցությամբ վերածվել է *em*-ի։ Որպես հոմանիշ հանդես եկող *qui manie facilement la parole* բազմաբառույթը նույնպես դարձվածք չէ։

11. **engeignier** կրկնում է **empiegier**—*prendre au piège* բայի կառուցվածքը։

12. **enlatiner** բառացի համապատասխանում է հայերեն «լատինացնել» կազմությանը։ Ուշագրավ է, որ *instruire en latin* բազմաբառույթում հանդես են գալիս *enlatiner* բայի երկու հիմնական բաղադրիչները՝ *en, latin*, որոնք զարմանալիորեն միմյանցից հեռացել են։ Այստեղ մենք գործ ունենք բազմաբառույ-

բացման մի հազվագյուտ երևույթի հետ. նույն տարրերը հանդես են գալիս ինչպես մենաբառությամբ, այնպես էլ բազմաբառությամբ: Այլ կերպ ասած, նույն տարրերի խտացմանը զուգահեռ տեղի է ունեցել դրանց բազմաբառությացում: Նկատենք նաև, որ *instruire en latin* բազմաբառությամբ նույնպես դարձվածք չէ:

13. **enlignagier** նախորդի նման բաղկացած է *en* նախդիրից, ընդ որում *prouver sa descendance* կապակցությունում *descendance* բառն ունի *lignée* հոմանիշը, որը հեշտությամբ կարող է փոխարինել *descendance* բառին: Այլ կերպ ասած, ֆրանսերենում բացառված չէ նաև *prouver sa lignée* կապակցությունը, որի մեջ կունենանք *enlignagier* մենաբառության *lignage* գոյականը:

14. **enoiseler**—«կերակրել թռչնի պես». բառացի նշանակում է՝ *թռչնացնել, թռչունի վերածել*: Կազմված է *en* նախդիրից, *oiseau* «թռչուն» գոյականից և *eler* անորոշի կազմիչից: *Nourrir comme un oiseau* բազմաբառությամբ *en* նախդիրի դիմաց ունի *nourrir comme* կապակցությունը: Հաշվի առնելով այս բազմաբառության իմաստային դաշտի ընդարձակությունը՝ կարելի է ենթադրել, որ խոսքը դարձվածքի մասին է:

Այսպիսով, մեր կատարած վերլուծությունից ստացվում է հետևյալ պատկերը.

1. Բրյուսոյի ցանկում բերված օրինակներից 14-ն անցել են մեզ ծանոթ ճանապարհով՝ բազմաբառության վերածվելով մենաբառության, իսկ հետագայում՝ մենաբառության բազմաբառության:

2. Դիտարկված մենաբառություններում մեծ դեր են խաղում բայական կազմիչները, որոնք դարձվածքներում կամ ազատ կապակցություններում փոխարինվում են առանձին բայերով, ինչպես օրինակ՝ *avoier* — *mettre sur la voie*, *empiegiar* — *prendre au piège*, *adosser* — *tourner le dos* և այլն:

3. Բրյուսոյի ներկայացրած մենաբառություններում որոշ արդյունավետություն են ցուցաբերում նաև՝ նախածանցները, մասնավորապես *des* և *de* տարբերակները, ինչպես օրինակ՝ *desuser*, *desvouloir* և այլն:

4. Ասվեց նաև, որ Բրյուսոյի ներկայացրած բազմաբառություններից ոչ բոլորն են դարձվածքներ: Այսինքն՝ ըստ էության, Բրյուսոն ցույց է տվել մենաբառությ-բազմաբառությ զարգացման ճանապարհը՝ առանց տարբերակելու դարձվածքներն ազատ կապակցություններից: Այս դեպքում՝ կարող ենք խոսել ամբողջական բառային միավորների՝ բազմանդամ հոմանիշներով փոխարինվելու մասին:

Ասվածը հաստատվում է նաև ֆրանսերենի պատմական բառարանների տվյալների վերլուծությամբ, որը մենք կատարել ենք երկու բառարանների

հիման վրա, այն է՝ Մ. Ա. Բորոդինայի, Մ. Վ. Գորդինայի, Վ. Ֆ. Շիշմարյովի «Հին ֆրանսերենի բառարանը»¹ և Ա. Ժ. Գրեմասի «Հին ֆրանսերենի բառարանը»² :

Հենվելով Բրյուսոյի և այլ հեղինակների նշած փաստական նյութի վրա, նոր ձևավորված բազմաբառությունները կամ բազմանդամ հոմանիշները կարելի է դասակարգել ըստ հետևյալ խմբերի՝

1. Հին ֆրանսերենի շատ ամբողջական բառային միավորներ ժամանակակից ֆրանսերենում արտահայտվում են միայն բազմանդամ հոմանիշների միջոցով: Այստեղ տարբերում ենք հետևյալ դեպքերը.

ա) Հին ֆրանսերենի բառն անհետացել է և արդի ֆրանսերենում արտահայտվում է միայն վերլուծաբար, ընդ որում հին ֆրանսերենի բառի և նրա վերլուծական հոմանիշի միջև չկա ծագումնաբանական կապ: Օրինակ՝

afoier — mettre en mauvais état

apareillier — faire semblant

assoldre — donner à l'absolution և այլն:

բ) Հին ֆրանսերենում տվյալ հասկացությունն արտահայտվել է բառով, իսկ արդի ֆրանսերենում արտահայտվում է բառակապակցությամբ, ընդ որում նրանց միջև գոյություն ունի ծագումնաբանական կապ: Դմնտ.

aconter — tenir compte

acoster — mettre à côté, se mettre à côté

acreire — faire crédit, prêter sur parole, prendre à crédit

aisier — se mettre à l'aise, devenir facile և այլն:

2. Հին ֆրանսերենի բառային միավորը պահպանվում է արդի ֆրանսերենում (չնայած փոքր-ինչ վերափոխված ձևով), սակայն արտահայտվում է նաև բառակապակցության ձևով: Օրինակ՝

acorder — accorder, être d'accord

adolcir — adoucir, rendre doux

fuir — fuir, prendre la fuite և այլն:

3. Որոշ դեպքերում հին ֆրանսերենի բառի մի իմաստը արդի ֆրանսերենում ունի իր բառային համապատասխանությունը, իսկ մյուս իմաստն արտահայտվում է վերլուծաբար: Օրինակ՝

nidifier — 1. nicher, 2. faire son nid

pignier — 1. peigner, 2. donner des coups de dents, des coups de griffe:

Բերված օրինակները վկայում են, որ ժամանակակից ֆրանսերենում ավելացել է նման հասկացությունների տեսակարար կշիռը, և հաճախակի է

¹ Бородина М. В. Гордина М. В. Шишмарев В. Ф. Словарь старофранцузского языка. М.-Л., 1955.

² Greimas A. J. Dictionnaire de l'ancien français. P., 1968.

դարձել դրանց գործածությունը, ինչը տարբեր հեղինակներ բացատրում են տարբեր կերպ: Ոմանք վերլուծաբար արտահայտված հասկացությունների գործածության հաճախակի լինելը բացատրում են ածանցական բառակազմության հարաբերական աղքատությամբ¹, իսկ մյուսները վերլուծական միտումներով, որոնք բնորոշ են ֆրանսերեն լեզվին²:

Վերլուծական լեզվամիավորների կենսունակությունը բացատրվում է նաև նրանով, որ այդ միավորներն օժտված են այնպիսի հատկանիշներով, որոնք չկան ամբողջական բառային միավորներում (ինչպես օրինակ բազմիմաստությունն ու համանունությունը, արտահայտչականության բացակայությունը և այլն): Իսկ վերլուծական լեզվամիավորները բնորոշվում են արտահայտչականությամբ, հնչյունական ինքնուրույնությամբ, ձևաբանական և իմաստային պատճառաբանվածությամբ, իմաստի հստակությամբ:

Այսպիսով, հանրագումարի բերելով վերը շարադրվածը, կարող ենք նկատել, որ *բազմաբառությացունը* մեզ ներկայանում է գաճազան տարբերակներով՝ ծնունդ տալով մի կողմից ազատ կապակցությունների, մյուս կողմից՝ դարձվածքների:

¹ J. Marouzeau, Notre langue. Enquêtes et récréations philologiques. Paris, 1955 (Chapitre II. Déficiences de la dérivation).

² N. Dănilă, Sur la vitalité de la dérivation en français et en roumain. "Recueil d'études". Bucarest, 1959, p.56.